Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-950[1]-25.10.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 28-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի փակագծերում նախատեսված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և Գլխավոր դատախազի տեղակալների վրա: Քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից այն վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի նկատմամբ, որոնք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին, կիրառվում են քննիչի վարքագծի կանոնները: Գլխավոր դատախազի տեղակալների կողմից այն վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի նկատմամբ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին, կիրառվում են դատախազի վարքագծի կանոնները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 28-րդ հոդվածի~~ի 1-ին մասի վերջում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունը~~ լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի փակագծերում նախատեսված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և Գլխավոր դատախազի տեղակալների վրա: Քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից այն վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի նկատմամբ, որոնք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին, կիրառվում են քննիչի վարքագծի կանոնները: Գլխավոր դատախազի տեղակալների կողմից այն վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի նկատմամբ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին, կիրառվում են դատախազի վարքագծի կանոնները:~~Սույն մասով նախատեսված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների նկատմամբ:~~»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

~~**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-950-25.10.2024-ՊԻ-011/1, Կ-950[1]-25.10.2024-ՊԻ-011/1, Կ-950[2]-25.10.2024-ՊԻ-011/1 ԵՎ Կ-950[3]-25.10.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ Կառավարություն***	**««Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում Քննչական կոմիտեի և Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ միասին՝ քննչական մարմիններ) ղեկավարների, նրանց տեղակալների և Գլխավոր դատախազի տեղակալների վրա:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ Կառավարություն***	**««Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 2.** Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1. 1-ին կետի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն կետի փակագծերում նախատեսված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների, Գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի քննում քննչական մարմինների ղեկավարների, նրանց	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի քննում Գլխավոր դատախազի տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին:»: 2. 8-րդ կետի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն կետի փակագծերում նախատեսված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների, Գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի ներկայացնում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի ներկայացնում Գլխավոր դատախազի տեղակալների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ, եթե դրանք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին:»:»		

3.	***ՀՀ Կառավարություն***	**«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 3.** Օրենքի 27-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի 1-ին կետում «վրա» բառից հետո լրացնել «, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա» բառերը. 2) 2-րդ մասի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և Գլխավոր դատախազի տեղակալների վրա:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	***ՀՀ Կառավարություն***	**«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված.**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 4.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և Գլխավոր դատախազի տեղակալների վրա:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	***ՀՀ Կառավարություն***	**«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված.**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 5.** Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասում «(առկայության դեպքում)» բառերից հետո լրացնել «, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ համապատասխանաբար Կառավարությանը կամ վարչապետին» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	***ՀՀ Կառավարություն***	**«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ.**	**Նախագիծը լրացնել նոր 6-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»	Ընդունվել է:	Ընդունվել է:

7.	***ՀՀ Կառավարություն***	**«««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 1.** «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 28-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «1.1. Սույն հոդվածի 1-ին մասի փակագծերում նախատեսված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և Գլխավոր դատախազի տեղակալների վրա: Քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից այն վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի նկատմամբ, որոնք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին, կիրառվում են քննիչի վարքագծի կանոնները: Գլխավոր դատախազի տեղակալների կողմից այն վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի նկատմամբ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին, կիրառվում են դատախազի վարքագծի կանոնները:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	***ՀՀ Կառավարություն***	**«««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	***ՀՀ Կառավարություն***	**«««Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 1.** «Քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. «4. Քննչական կոմիտեի նախագահի և նրա	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տեղակալների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն հոդվածով նախատեսված սահմանափակումների խախտման վերաբերյալ վարույթն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:»		
10.	***ՀՀ Կառավարություն***	**««Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 2.** Օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների նկատմամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված իրավիճակի առաջացման վերաբերյալ վարույթն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	***ՀՀ Կառավարություն***	**««Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ:** «**Հոդված 3.** Օրենքի 29-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «2. Քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների կարգապահական պատասխանատվության հիմք է նաև նրանց կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագրքի խախտումը, որի դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում կիրառելի չեն սույն օրենքով նախատեսված՝ կարգապահական վարույթի վերաբերյալ կարգավորումները: Սույն մասով նախատեսված դեպքերում վարույթը հարուցում և իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով: Սույն մասով սահմանված կանոնը չի վերաբերում այն դեպքերին, երբ Քննչական կոմիտեի ղեկավարը կամ տեղակալը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			թույլ է տալիս վարքագծի կանոնների և շահերի բախման այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են նրա՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին:»:		
12.	***ՀՀ Կառավարություն***	**«Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Նախագիծը լրացնել նոր 4-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 4.** Օրենքի 31-րդ հոդվածը լրացնել նոր 15-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «15. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը քննարկում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու (սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տույժերից մեկը կիրառելու) հարցը և կայացնում է համապատասխան որոշում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	***ՀՀ Կառավարություն***	**«Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Նախագիծը լրացնել նոր 5-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած վարքագծի կանոնները, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ կարգավորումները կամ սահմանափակումները խախտելու կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերի վրա, եթե չեն լրացել պատասխանատվության ենթարկելու Օրենքով սահմանված ժամկետները:»	Ընդունվել է:	Ընդունվել է:

14.	***ՀՀ Կառավարություն***	**««Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 1.** «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների կարգապահական պատասխանատվության հիմք է նաև նրանց կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագրքի խախտումը, որի դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում կիրառելի չեն սույն օրենքով նախատեսված՝ կարգապահական վարույթի վերաբերյալ կարգավորումները: Սույն մասով նախատեսված դեպքերում վարույթը հարուցում և իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով: 4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնը չի վերաբերում այն դեպքերին, երբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալը թույլ է տալիս վարքագծի կանոնների և շահերի բախման այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են նրա՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	***ՀՀ Կառավարություն***	**««Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	**Հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 2.** Օրենքի 34-րդ հոդվածը լրացնել նոր 24-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «24. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը քննարկում է կարգապահական պատասխանատվության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ենթարկելու (սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տույժերից մեկը կիրառելու) հարցը և կայացնում է համապատասխան որոշում:»:		
16.	***ՀՀ Կառավարություն***	**«««Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.** «**Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած վարքագծի կանոնները, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ կարգավորումները կամ սահմանափակումները խախտելու կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերի վրա, եթե չեն լրացել պատասխանատվության ենթարկելու Օրենքով սահմանված ժամկետները:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	***ՀՀ Կառավարություն***	**««Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**«Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածը լրացնել նոր 5.1.-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.** «5.1. Գլխավոր դատախազի տեղակալների նկատմամբ տարածվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության և այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումները: Սույն մասով սահմանված կանոնը չի վերաբերում այն դեպքերին, երբ Գլխավոր դատախազի տեղակալը թույլ է տալիս այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին:»		

18.	***ՀՀ Կառավարություն***	**««Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Օրենքի 53-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.** «2. Գլխավոր դատախազի տեղակալի կարգապահական պատասխանատվության հիմք է նաև նրա կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագրքի խախտումը, որի դեպքում, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ կարգավորումները կամ սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները խախտելու կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում, կիրառելի չեն սույն օրենքով նախատեսված՝ կարգապահական վարույթի վերաբերյալ կարգավորումները: Սույն մասով նախատեսված դեպքերում վարույթը հարուցում և իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով: Սույն մասով սահմանված կանոնը չի վերաբերում այն դեպքերին, երբ Գլխավոր դատախազի տեղակալը թույլ է տալիս այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
19.	***ՀՀ Կառավարություն***	**««Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.** «Գլխավոր դատախազի տեղակալների նկատմամբ տարածվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագիրքը, բացառությամբ այն դեպքերի, երբ Գլխավոր դատախազի տեղակալը թույլ է տալիս այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

20.	***ՀՀ Կառավարություն***	**««Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**	**Եզրափակիչ մասը և անցումային դրույթները շարադրել հետևյալ խմբագրությամբ.** «**Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած վարքագծի կանոնները, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ կարգավորումները կամ սահմանափակումները խախտելու կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերի վրա, եթե չեն լրացել պատասխանատվության ենթարկելու Օրենքով սահմանված ժամկետները:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: